ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հունվարի 2021 թվականի №---Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի №11Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՄԱՎՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի և 2021 թվականի հունվարի 20-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 22-ի «ՄԱՎՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Զանախչի ՀԷԿ-2» փոքր հիդրո-էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №11Ա որոշմամբ «ՄԱՎՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0232 լիցենզիայի պայմաններում ամրագրել վերակառուցման ժամանակահատված՝ մինչև 2022 թվականի հունվարի 22-ը, և որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի՝

   1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

      «3. Սույն լիցենզիան գործում է մինչև 2022 թվականի հունվարի 22-ը, որից՝

      1) 2021 թվականի հունվարի 28-ից մինչև 2022 թվականի հունվարի 22-ը վերակառուցման ժամանակահատվածն է,

2) մինչև 2022 թվականի հունվարի 22-ը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:»,

2) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում՝ Լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածներում) վերակառուցել 1700 կՎտ հաշվարկային հզորությամբ «Զանախչի ՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանը (այսուհետ՝ Կայան), արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) և այն վաճառել Շուկայի կանոններով:»:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 28-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունվարի 2020թ.